ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿ· ՀԱՅԵՐԻՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

№13.

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԻՉ (ԱՇՈՒՂ)

Ինչցվ չէլաւ, չրուասատ էկար մէ լալ եարին. Սայեաթ-Նովա։

Ա 11
91147

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱՏՈՒՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ· ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ·
1882

891.981

Дозволено Цензурою 22 Марта 1882 г. Тифлисъ.

Типографія М. Вартанянца и К-°. противъ Троицкой церкви.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱՅԻ ՄԱՍԻՆ.

Կովկասի կողմերում եւ մանաւանդ Թիֆլիսում ամենքին լաւ յայտնի աշուղ Սայեաթ-Նովան ծնուած է մօտաւորապէս 1712 թուին Թիֆլիս քաղաքում մի Հալէբցի հօրից եւ Հավլաբարցի մօրից եւ վախճանուել է 1795 թուին, 83 տարեկան հասակում: Սայեաթ-Նովայի հայրը եղել է մղոսի, մի աննշան խեղճ մարդ: Սայեաթ-Նովան առաջ կրելիս եղել է Արուաթին (Ցարուաթիւն) անուն եւ ջուլհակի մօտ աշակերտուաթիւն անելով, կարճ միջոցում վարպետանում է եւ ինքն իրեն մի մեքենայ է հնարում, որով կտաւը փողոցի մէջ հիւսելու տեղ, հիւսում ու գործում է եղել սենեակումը: Շատ վաղ նկատելով իւր քերթողական շնորհքը, Արուաթինը պատկուց գլուխ է դնում ամենայն խաղին եւ սովորում քամանչէն: Ջուլհակ Արուաթինը իւր մեքենայի առաջեւ հորում նստած մքուրի ձայնի վրայ առաւօտեան հանած խաղը գեղգեղում է եղել գիշերը իւր քաղցր ձայնով իշխանների բարձր ու լայն դարբասներումը: Վերջը մքուրը քամանչի վրայ փոխած, համարձակ դուրս է եկել հրապարակ եւ իւր աշուղական հռչակաւոր Սայեաթ-Նովա անունով մոռացնել է տուել ջուլհակ Արուաթինի անունը: Աշուղների սովորութեանը հետեւելով, սա էլ առաջ խաղերն ասել է թուրքերէն: Նորա դավթարիցն երեւում է, որ նա իւր աշուղական 17 տարուան մէջ (1742—1759) հանել է 115 թուրքերէն եւ 46 հայերէն խաղեր, չը հաշուելով կորածներն ու չը գրածները: Ասած ունի նմանապէս վրացերէն աշխոյժ խաղեր անթիւ եւ յանկարծախօսութիւններ անհամար: Սա Էրէկլէ վրաց թագաւորի արքունական սիրելի աշուղն է եղել: 1759 թուից յետոյ էլ չունի խաղ հանած եւ իւր զաւակներին թիֆլիսում թողած հեռանում է Հաղպատու Սուրբ Նշանի վանքը, որտեղ արեզայ է ծեռնադրվում: Սայեաթ-Նովան Աղա-Մահմէդ-խանի Վրաստանի սահմաններին մօտենալը լսելով, միտն է բերում իւր զաւակներին (Մելքիսեդ եւ Օհան ու Սառա եւ Մարիամ), գալիս է Թիֆլիս եւ նրանց ուղարկում Մազդոկ: Նրանց ճանապարհ դնելուց յետոյ, ինքը մնում է

Թիֆլիսի Հաղպատու առաջնորդարանում, որ եղել է Մեծ Բերդի եկեղեցում: Պարիկները աւերում են քաղաքը եւ մտնելով այս եկեղեցին դուրս են քաշում այնտեղ աղօթք անող Սայեաթ-Ղովային եւ նահատակում՝ քրիստոնէական հաւատը չուրանալու պատճառով: Թաղուած է Սայեաթ-Ղովան Մեծ Բերդի եկեղեցու հիւսիսային փոքր դրան առաջեւ:

Մեր երգչի որդի Մելքիսեդը Թիֆլիսից Մոզդոկ գնալիս տանում է հեռը իւր հօր դավթարը։ Մելքիսեդի որդի՝ Թիֆլիսի Ջզրաշէն եկեղեցու աւագ քահանայ Տէր-Մովսէսը բերում է Մոզդոկից Թիֆլիս իւր պապի դավթարը եւ հանում է այդ հանդուցեալ բժշկապետ Գէորգ Ախվերդեանի ձեռքը, որ հաւաքելիս է եղել շատ այդպիսի դավթարներ: Այդ դավթարը բաղկացած 73 թերթից է բաղկացած եւ պակաս են մէջը առաջից, միջից եւ վերջից շատ թերթեր: Երգերը գրուած են հայերէն եւ վրացերէն տառերով:

Որքան էլ աշուղն է եղել հռչակաւոր եւ երեւելի, այնքան էլ նորա երգերի ուսումնասիրողը՝ լուսահոգի բժշկապետը, որ ամեն կերպ ջանք է արել երգերը տպելու ճշդութեամբ եւ ամեն հարկաւոր բացատրութիւններով: Հայերէն խաղերը բժշկապետի յառաջաբանով, Թիֆլիսի բարբառի բերականութենով եւ ամեն երգերի տակը մանրամասն ծանօթութիւններով տպուած են Մոսկվայում 1852 թուին՝ դիտական Մկրտիչ Էմինի տեսչութեամբ:

Մենք տպում ենք 46 հայերէն երգերից 20 հատ, վերջում դնելով դժուար հասկանալի բառերի բացատրութիւնը, ըստ որովին հետեւելով հանդուցեալ բժշկապետին:

Ամէն սազի մէջըն գօրած գոն թամամ դասն իս, քամանչա.
Նաքազ մարթ քիզ չ'ի կանա տէսնի դուն նըրա պասն իս, քամանչա.
Ղաստ արա՛ էլ լալ օրէրուն էգիլըն հասնիս, քամանչա.
Քիզ ինձնից օ՞ղ կանայ խըլի՝ աշուղի բասն իս, քամանչա։

Անգաճըդ էրծաթէն պիտի, գըլուխըդ ջաւահիր քարած,
Կուրթըդ շիրմայէմէն պիտի, փուրըդ սադափօղ նախշ արած,
Սիմըդ օսկէն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած.
Օչ օղ ղիմէթըդ չ'ի գիդի՝ լալ ու ալմասն իս, քամանչա։

Ճիպուտըդ վարաղնած պիտի՝ թահր ունէնայ հազար ռանգօղ.
Զարըդ ռաշի կուդէն պիտի՝ վուր դուն խօսիս քաղցրը հանգօղ.
Շատին գարթուն կու լուսացցնիս, շատին կու քընէցնիս բանգօղ՝
Անուշահամ գինօվ լիքըն դոն օսկէ թասն իս, քամանչա։

Ածողիդ էրկու կու շինիս՝ առաչ չայի ղափա գ՝ուզիս.
Կու մէձբրիլիս այիվնումբն՝ պարապ վախտի բափա գ՝ուզիս.
Եփ վէր դու քաս մէջլիսումբն քաղցբր զող ու սափա գ՝ուզիս.
Բոլորքբդ գոզալնիր շարած մէջլիսի կէսն իս՝ քամանչա։

Շատ տբխուր սիրտ կու խբնդացնիս՝ կու կբտրիս հիվբնդի դուղբն.
Եփ քաղցբր ձայնբդ վիր կոնիս՝ բաց կու՝լի հիդբդ խաղողբն.
Խալխին էս իլթիմազն արա՝ ասին. «Ապրի քու ածողբն».
Քանի սաղ է Սայեաթ-Նովէն՝ շատ բան կու տէսնիս՝ քամանչա։

Թէգուզ քու քաշբն մարքբիտ տան բրոյի բրոյի՝
Թէգուզ քու քաշբն ալմաս տան բրոյի բրոյի՝
Եար՝ չ՝իմ տա՝ չ՝իմ հեռացնի քի՛զ քու եարէմէն,
Բարէբարէմէն։

Զ՝իմ քաշվի էկած մահէմէն՝
Բաղիփի տբվաճ ահէմէն.
Թէգուզ բաղամ գայ Շահէմէն՝

Եար, չ'իմ տա, չ'իմ հեռացնի քի՛զ քու եարէմէն
Բարէբարէմէն.

Թէգուզ քու քաշըն ալմաս տան բրոյի բրոյի,
Թէգուզ քու քաշըն մարգրիտ տան բրոյի բրոյի,
Եար, չ'իմ տա, չ'իմ հեռացնի քի՛զ քու եարէմէն,
Բարէբարէմէն,,

Արի՛ ինձ անգաճ կա՛լ, սի՛ դիվանա սիրտ,
Հայա սիրէ՛, ադաբ սիրէ՛, ար սիրէ՛.
Աշխարքըս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՝
Աստուած սիրէ՛, հօքի սիրէ՛, եար սիրէ՛։

Էն բանն արա՛ վուր Աստուծու շարքումն է,
Խըրատնիրըն՝ գըրած Հարանց վարքումն է,
Երիք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է՝
Գիր սիրէ՛, զալամ սիրէ՛, դավթար սիրէ՛։

Ե՛կ արի՛, սի՛րտ, մի՛ կէնա դուն մէ դամաղի,
Հալալ մըտիկ ա՛րա հացի ու աղի,
Հէնց բան արա՛ մարթ վըրէդ չը ծիծաղի՝
Խըրատ սիրէ՛, սաբըր սիրէ՛, շար սիրէ՛։

Հընպարտութին չ'անիս՝ դուր գու քաս Տէրիդ,
Խօնարութին արա՛ կանց քիզ դէվէրիդ,
Աստուած դիփունանցըն մին հօքի էրիտ՝
Աղկատ սիրէ՛, զօնաղ սիրէ՛, տար սիրէ՛։

Սայեաթ-Նովա, էրնէկ քիզ, թէ էս անիս՝
Հօքուդ խաթրի մարմնուդ ունքրը կէս անիս.
Թէ գ՝ուզիս վուր դադաստան չը տէսանիս՝
Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ։

Մէ խօսկ ունիմ իլթիմազօվ, անգաճ արա՝
օվ աչկիլուս.
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսըն բարօվ
աչկիլուս.
Աչաք քիզ ինչ գէթ իմ արի՝ կէնում՝ իս խըռօվ
աչկիլուս.
Աշխարս աշխարօվ կըշտացաւ, իս քիզանից սօվ
աչկիլուս։

Մագամ էլ օչ օվ եար չ՝է սիրի, էս ի՞նչ արիր՝
էս ի՞նչ բան ա.
Էշխէմէդ ջունուն իմ էլի, ման իմ գալի եանա
եանա.
Էս դարդէն օչ օվ չը քաշէ, վուր մէ դանգին
չ՝ի դիմանա՝
Սիրտըս յուրի պէր խօրվէցիր էշխիդ կըրակօվ
աչկիլուս։

Դօստիրըս գուշման շինէցիր, եադէրուն ի՞նչպէս
դօստ անիմ։

Անցկացած օրըն չիմ տէսնում քանի գուզէ վուր
դաստ անիմ։
Ասուած վրկայ, խիստ դրժար է, գլուխըս ի՞նչ-
պէս դուս տանիմ՝
Եա մէ փուքրը նալի նըմանն, քու էշխըն է՝ ծօվ,
աչկիլուա։

Գ՚ուզիմ բերանըս բաց անիմ, գօվքըդ ասիմ
թարիսի պէս.
Տաս տարի է մանն իմ գալիս փադիշահի շահի-
փի պէս.
Օխտըն տարի էլ մանն գու քամ սաղըն ձէռիս
Ղարիբի պէս՝
Բութա Շահսանամըս դուն իս, է՚լ չ՚ունիմ օջ
օվ, աչկիլուա։

Թէգուզ հազար դարդ ունէնամ ես սըրտումըս
ահ չ՚իմ ասի.
Իմ հուքմի հէքիմըն դուն իս, ես էլ ուրիշ Շահ
չ՚իմ ասի.
Սայեաթ-Նովէն ասաց. Զալում ես էն մահին մահ
չ՚իմ ասի՝
Հէնչալի ըլի՝ դուն վըրէս լաս մազըդ շաղ տալօվ,
աչկիլուա։

Դուն էն գըլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին բաք մի՛ անի,
Էրազումըն տէսածի հիդ միզի մէ հէսաբ մի՛ անի,
Ես խօ՛մ էն գըլխէն էրած իմ, նուրմէկանց քաքաք մի՛ անի,
Թէ վուր, գիդիմ, բէդարիլ իս, ուրիշին սաքաք մի՛ անի։

Զը կայ քիզ պէս հուքմի հէքիմ՝ դուն Բօստօմի Զալ, Թաքալուր.
Ասկըդ ասկէրումըն գօվաճ, համ դուն իս գօզալ, Թաքալուր.
Թէ էսանց էլ սուչ ունէնամ՝ գըլուխս արա՛ տալ, Թաքալուր.
Մըտիկ արա՛ քու Ստիղծողին՝ նահախ տիղ զաղաք մի՛ անի։

Գարալուն հէքիմն էնդուր գ՝ուզէ՝ դիզ տալու է, ցավ տալու չ՝է.
Քանի գ՝ուզէ արբաք ըլի՝ զուլըն աղին դավ տալու չ՝է.
Դուն քու սիրտըն իստակ պահէ՝ եադի խօսկըն ափտալու չ՝է.
Աստուծու սէրն կանչօղի պէս դըռնէմէդ ջուղաք մի՛ անի։

Ամէն մարթ չ՚ի կանա խըմի իմ ջուրն՝ ուրիշ ջըրէն է.
Ամէն մարթ չ՚ի կարթա իմ գիրըն՝ ուրիշ գըրէն է.
Բունիաթս ավազ չ՚իմանաս՝ քարափէ քարուկը-ըէն է՝
Սէլամի պէս՝ առանց ցամքիլ, դուն շուտով խա-ըաբ մի՛ անի։

Քանի գ՚ուզէ քամին տանէ՝ ծովէմէն ավազ չ՚ի պակսի.
Թէ գուզ ըլիմ, թէ գուզ չ՚ըլիմ՝ մէջլիսներուն սազ չ՚ի պակսի.
Թէ կու պակսիմ, քի՛զ կու պակսիմ՝ աշխարիս մէ մազ չ՚ի պակսի՝
Սայեաթ-Նովու գէրէզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի։

Ուստի՞ գու քաս, դարիբ բըլբուլ,
Դու մի՛ լաց՚ լի, ես իմ լալու.
Դու վարթ պըտռէ՚, ես գոզալին, —
Դու մի՛ լաց՚լի, ես իմ լալու։

Արի՛, բըլբուլ, խօսի՛ բառըն,
Օխնըվի՛ քու էկած սարըն.

Քի վարթն էրից, ինձ իմ եարըն,—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու։

Ման իմ գալի գիգարի հիդ,
Վունց զարիք բըլբուլ խարի հիդ.
Դու վարթի հիդ, ես եարի հիդ,—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու։

Սալբուի նըման կանանչ իմ,
Ե՛կ, խօսի՛՝ ձայնըդ ճանանչիմ;
Դու վարթ կանչէ՛, ես եար կանչիմ;—
Դու մի լաց՛լի, ես իմ լալու։

Ղարիք բըլբուլ՝ ձայնիդ մալում;
Ես ու դու էրվինք մէ հալում։
Սայեաթ-Նովէն ասաց՝ զալում;—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու։

Ինձ ու իմ սիրէկան եարին մէ տարի բէրած գիդէնաք.
Ա՛խ քաշէլէն՝ սըրտիս մէջըն արունն մէրած գիդէնաք.
Գիշիր ցէրէկ՝ եարի խաթրու՝ ջիգարըս էրած գիդէնաք.
Աչկըս թաց, բէրանս ցամաք, լիզուս հիդքէրած գիդէնաք։

Սիրտը փուրումը թուլացաւ անգալնէրու զախ անէլէն,
Ուշկ ու միտկը խառնըվէցաւ խուռըն խուռըն խաղ հանէլէն,
Ակէմէս ջուհարըն գընաց՝ եարէն կարօտ՝ ախ անէլէն,
Էլ ապրէլու ումիկ չ՚ունիմ՝ իմ օրը կէրաճ գիդէնաք։

Էրաճ խօրվաճ մանն իմ գալի՝ մէ տիղ չը կայ նաղ ունէնամ։
Լիզվով չ՚իմ կանացի ասի՝ թէգուզ խօսկը փարդ ունէնամ։
Ափսուսալու հազար ափսուս՝ ես է՞ս զաղա դարդ ունէնամ։
Էշխէն ուշկ ու միտկը կապաճ՝ ինձ ջըրի տարաճ գիդէնաք։

Սիրտը փուրումը սըքուր է՝ ալ աչկիրը լաց է անում։
Տօվըն նընգաճ ամբի նըման դօշը ու եախէս թաց է անում։
Քանի վուր մըհլամ իմ դընում՝ դուգունա էլ խիստ բաց է անում։
Հալվէցայ արնաքամէլի՝ եարէս հիդարաճ գիդէնաք։

Օվ տէսնում է՝ էս է ասում։ «Վայ քու դարին՝
Սայեաթ-Նովա՝
«Համաշա քիզ պիտինք տէսնի՝ աչկըդ արին՝
Սայեաթ-Նովա՝
«Ինչո՞վ չ'էլաւ՝ չը ռաստ էկաւ՝ մէ լալ եարին՝
Սայեաթ-Նովա.»
Ունըրրս էրազի պէս գընաց՝ ծառըս չը խէրաց
գիդէնաք։



Ես ասում՝ թէ՝ լաց իս էլի.
Բարով տէսայ՝ իմ սիրէկան.
Վարթի նըման բաց իս էլի
Խարէրով՝
Խարէրով.
Բարով տէսայ՝ իմ սիրէկան։

Արի՝ մէ դարդըս իմացի՝
Էշխէմէդ համան իմ լացի.
Օրըս էսպէս անց է կացի
Դարէրով՝
Դարէրով.
Բարով տէսայ՝ իմ սիրէկան։

Եվ կու հաքնի՛ս ալ ու ատլաս՝
Տէսնողին կու շինիս մաս մաս.

Դոշիդ պիտի լալ ու ալմաս
Շարէրօվ,
Շարէրօվ.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան։

Ես քիզ գօվիմ խաղի մէջըն,
Շամամնիրըդ թաղի մէջըն.
Ման իս գալի բաղի մէջըն
Եարէրօվ,
Եարէրօվ.
Բարօվ տեսայ, իմ սիրէկան։

Սայեաթ-Նովէն վոնց դընջանայ՝
Աչկիրըդ օսկէ փընջան ա.
Դուշմանի լիզուն մընջանայ
Զարէրօվ,
Զարէրօվ.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան։

Զէնդ քաղցրը ունիս՝ լամզօվ կու խօսիս.
Նա պահէ քիզ, ումն օր ծառայիս, գօզալ.
Մէջկըդ ջէյրանի է, ռանգըդ շաքարի,
Փռանգըստանէն էկած խարա իս, գօզալ։

Ղումաշ ասիմ՝ շուրէղէն է կու մաշվի,
Սալբի ասիմ՝ ախբը մին օր կու տաշվի,
Ջէյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու եաշվի,
Բաս վո՞ւնց թարիփ անիմ՝ միրա իս, գոզալ։

Թէ մանուշակ ասիմ՝ սարէմէն կոսին,
Թէ ջավայիր ասիմ՝ քարէմէն կոսին,
Թէ վուր լուսին ասիմ՝ տարրէմէն կոսին,—
Արէգագի նըման՝ փարա իս, գոզալ։

Գ՝ուզիմ թէ համաշա դըրանըդ գամ ուխտ՝
Աչկիրըդ կարմիր վարթ, նուր բացարաճ տուխտ,
Լիզուդ՝ գըրիչ ունիս, ձէռըդ՝ գուլգաղ թուխտ.
Ծօվէմէն դուս էկաճ՝ զարա իս, գոզալ։

Սիրայ սիրմըդ սըրտիս մէջըն ցանէցիր,
Նազ ու դամզօվ, եա՛ր, իմ հօքիս հանէցիր,
Է՛ս քու Սայեաթ-Նովուն դո՛ւն սըպանէցիր.
Գըլխիդ էկաճ զադէն առայ ես, գոզալ։



Ինձ սիրէցիր, էշխըն նընգար, խաղի գավթար
իմ քիզ ամա.
Մի՛ քաղի փըշի ծաղիկըն՝ վարթ սուսանբար իմ
քիզ ամա.
Զ՝իմ թօղնի արէգագումըն՝ բաղչի սաջար իմ
քիզ ամա.

87116

Ես քու մահըն վո՞ւնց կու խընդրիմ՝ նուզլ ու
շաքար իմ քիզ ամա։

Է՛լ քու բաղին մըտիկ արա՛, ուրիշ բաղէն վարթ
չ՛ին տա քիզ։
Աղ ու հացըն մի դէն գըցի՝ շափթէնը մէկ մը-
տիկ տո՛ւ միզ։
Թէգուզ աշխարըս պըտուտ գաս՝ չ՛իս տէսնի ինձի
պէս ազիզ։
Թաք ուրիշ գոզալ չը սիրիս՝ իղրարօվ եար իմ
քիզ ամա։

Թաք ես մորէս չ՛էի ծընի։ վա՛յ էն օրին՝ ես քիզ
տէհայ։
Դու բուլբուլ իս՝ ես կարմիր վարթ։ չ՛ասիս, թէ՝
վարթըն ջալդ կ՛էհայ։
Մէ վուքըր էտէնց դիմացի՝ շուտով Հընդըստան
մի՛ էհա։
Անգօրձիլ՝ անխարջ ու քըրիհ՝ մանդիլի զար իմ
քիզ ամա։

Աստուած վըկայ՝ զիմիշ արած գըլուխըս քիզ
մատաղ ըլի։
Ե՛կ քիզիդ սիրօվ դամ՝ անիմ՝ օվ գ՛ուզէ ըէդա-
մաղ ըլի։
Ես քու խօսկէն չ՛իմ անց կէնա՝ թաք քու դա-
մաղըն չաղ ըլի։

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Թէգուզ անմահութիւն ուզիս՝ սիրով կու ճարիմ
քիզ համա։

Քու դարդըն ինձի պառվէցուց. ո՞ւմըն ասիմ,
Սայեաթ-Նովա.
Մի գըցի ձէռնէմէն ձէռըն՝ օսկէ թաս իմ, Սա-
յեաթ-Նովա.
Փռանգըստանու միչէն էլած՝ զար ատլաս իմ,
Սայեաթ-Նովա.
Ծալէ՝ դավթարըդ, զութին դի. ռանգ ու բու-
քար իմ քիզ համա։

Սայէաթ-Նովէն

Ի՞նչ կոնիմ հէքիմըն, ի՞նչ կոնիմ ջարէն՝
Քու տըվածըն ուրիշ գիզ է, ուրիշ գիզ։
Էրում է մըհլամըն, չ՝է լավնում եարէն.
Քու տըվածըն ուրիշ գիզ է, ուրիշ գիզ։

Սէրէկանն

Ասաց թէ. «Հիռացի՝ գըլխէմէս գընա,
«Քու ասածըն ուրիշ տիզ է, ուրիշ տիզ։
«Էտ քու արարմունքսըն քիզի չ՝ի մընա,
«Քու ասածըն ուրիշ տիզ է, ուրիշ տիզ։» ա՛-ըէշ
պէզ. ամա՞ն, ա-ըէշ պէզ։

Սայ՛ատ-Նովէն

Ասի թէ. «Էշխէմէդ չ՚իմ հանգչում տանը՝
«Զէռնիրը թելացաւ՝ չ՚է շինում բանը՝
«Էրվէցաւ ջիգարը՝ մաշվէցաւ ջանը՝
«Քու տըվածն ուրիշ դիզ է՝ ուրիշ դիզ։»

Սիրէկոն

Ասաց. «Իմ դիզէմէն քիզ չը կայ չարա՝
«Գընա՝ թէ խիլք ունիս՝ գըլխիդ ճար արա՝
«Թէ չէ՝ անիլ կու տամ քիզ փարա փարա.
«Քու ասածն ուրիշ տիզ է՝ ուրիշ տիզ։»

Սայէատ-Նովէն

Ես բըլբուլ իմ՝ վարթը մընաց խարումն.
Կըրակ գըրիր սըրտիս խուցի եարումն.
Վ.ունց գըրանքումն կայ՝ վունց դավթարումն
Քու տըվածն ուրիշ դիզ է՝ ուրիշ դիզ։

Սիրէկոն

Ասաց թէ. «Քի զարար՝ շինէցիր շահըդ.
«Կըտրէցիր ադաբըդ՝ կըտրէցիր ահըդ.
«Մի վիթի արունըդ՝ մի շանց տա մահըդ՝
«Քու ասածն ուրիշ տիզ է՝ ուրիշ տիզ։»

Սայեաթ-Նովէն

Ասի թէ. «Մազիրբդ նուրմա իս անում
«Հէնց գիդիս՝ չ'իմ գիդի, եար, չ'իմ իմանում։
«Սէրբդ ինձ մահ դարաւ՝ էլ չ'իմ դիմանում
«Քու տրվածքն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։»

Սէրբէկանն

Թաքավուրի թագի լալիղ քարքն իմ,
Շիրինի պէս Փահրադի դիդարքն իմ,
Ես էն գըլխէն Սայեաթ-Նովու եարքն իմ
Քու ասածքն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ։

Սայեաթ-Նովէն

Հիդըս խոսի՝, մի՝ կէնա խըռովի պէս.
Տալդա տրվիր՝ գէմիս տարար ծովի պէս.
Կու մէռնիմ—չ'իս տէսնի Սայեաթ-Նովի պէս.
Քու տրվածքն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։

Էշխէմէդ հիվանդացիլ իմ դիղի համա իմ լալի.
Վախում իմ թէ դարդքն հալէ, եղի համա իմ լալի.
Շահի կարքած վէքիլի պէս դիղի համա իմ լալի.
Տանէն դուս արածի նըման տիղի համա իմ լալի։

Մէ տիղ հուքմի հէքիմ չը կայ՝ դուռրն էհամ
կանչիմ հարա.
Վի կէնայ Լօղմայ հէքիմրն՝ բայքամ դարդիս
անէ չարա.
Տիս թէ ինչպէս է շրփոթվի՝ դուն իմ խիլքին
մրտիկ արա՝ —
Զուրրն էկաւ՝ գէրանս տարաւ՝ ծիղի համա իմ
լալի։

Միրտրս էշխէմէն էրաճ է՝ դուգուն դաղրն ի՞նչ
կօնիմ.
Վո՛ւնց զօրա ունէ՝ վո՛ւնց չափար՝ ես էնպէս
բաղն ի՞նչ կօնիմ։
Անղի լարրն կըտրրվիլ է՝ դարդակ սաղաղն ի՞նչ
կօնիմ։
Նիտրս քարումրն կօտրէցի՝ թիղի համա իմ լալի։

Ղալամրն գիրրս չ՚է գրրում՝ մէջ չուրացաճ
թանքի նրման.
Խօսկիրրս մէմէկ չ՚ի ասվի՝ իմաստոնէրու բանքի
նրման.
Մէջրն չ՚իմ կանացի մրտնի՝ ծօվի ծաճկաճ վանքի
նրման.
Խօստօվնահէրրս հիռացաւ՝ միղի համա իմ լալի։

Գիղումրն՝ մէլիք տանուտէր՝ քաղաքտիղրն Սուլթան Խան իս.

Բաղումքն՝ վարթ ու մանիշակ, սարումքն՝ սրն-
բուլ սուսան իս.
Ղաբուլ ունէ Սայեաթ-Նովէն՝ թաք քու ձէռով
դուն սրպանիս.
Մէռնէլուս համա չիմ հոքում՝ ցիղի համա
իմ լալի։

Եռ քու ղիմէթքն չ'իմ գիղի՝ ջավահիր քարին
նըման իս.
Տէսնօղին Մէջլում կու շինիս՝ Ալլի՝ դիդարի
նըման իս։

Աշխարումքս իմքն դուն իս,
Բէմուրվաթ իս, մուրվաթ չ'ունիս.
Գըռօշնէրիդ նաբաթ ունիս,—
Ղանդու շաքարի նըման իս։

Դադա պիտի՝ թարիփդ ասէ,—
Ակռէքրդ եաղութ ալմաս է,
Ռանգըդ Փըռանգի ատլաս է,—
Զար ղալամքարի նըման իս։

Մազիրրդ նըման ռեհանի,
Դուն ուրիշ խիալ մի անի,
Ռահմ արա՝ հոքիս մի հանի,—
Մուրվաթով եարի նըման իս։

Վ.ունց դիմանամ էսչափ չարին՝
Աչկէմէս կաթում է արին.
Այե՞աթ-Նօվա՝ նազու եարին
Գընած նօքարի նըման իս։

Թամամ աշխար պըտուտ էկայ՝ չը թօղի Հաքաշ՝ նազանի.
Զը տէսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունին քաշ՝ նազանի.
Թէ խամ հաքնիս՝ թէ զար հաքնիս՝ կու շինիս զումաշ՝ նազանի.
Էնդու համա քու տէսնօղըն՝ ասում է՝ վաշ՝ վաշ՝ նազանի։

Դուն պատվական ջավահիր իս՝ էրնէկ քու առնօղին ըլի.
Ցվ կու գըթնէ՝ ախ չ'ի քաշի՝ վայ կու կօրցընօղին ըլի.
Ափսո՞ւս վուր շուտով մէռիլ է՝ լուսըն քու ծընօղին ըլի.
Ապրիլ էր՝ մէկ էլ էր բէրի քիզի պէս նազաշ՝ նազանի։

Դուն էն գըլխէն ջուհարդար իս՝ վըրէդ զարնըշան է քաշած.

Դաստամազիդ թիլի մէջըն մէ շագա մարջան է քաշած.
Աչկերըդ օսկէ փիալա՝ չարխէմէն փընջան է քաշած.
Թէրթէրուկըդ նիտ ու նաշտար՝ սուր զալամ թըրաշ՝ նազանի։

Էրէսըդ՝ Փարսէվար ասիմ՝ նըման է շամ ու զամարին.
Բարակ միչկիդ թիրման շալըն՝ նըման է օսկէ քամարին.
Ղալամըն ձէռին չ՝է կանգնում՝ մաթ շինէցիր նազըշքարին.
Եվ նըստում իս՝ թուրթի զուշ իս՝ եվ կանգնում իս՝ ռաշ՝ նազանի։

Ես էն Սայեաթ-Նովասին չ՝իմ՝ վուր ավզի վըրայ հիմնանամ։
Աչաք միզիդ ինչ իս կամում՝ սըրտէդ մէ խաբար իմանամ։
Դուն կըրակ՝ հաքածըդ կըրակ. վուր մէ կըրակին դիմանամ։
Հինդու զալամքարու վըրէն ծածկիլ իս՝ մարմաշ՝ նազանի։

Բլբուլի հիդ լաց իս էլի,
Վարթի նըման բաց իս էլի
Վարթաջըրով թաց իս էլի,—
Թաց իս էլի.
Զ'կայ քիզէ նման, չ'կայ քիզի նման.
Քիզ նման, քիզ նման.—
Դուն իս աննման.

Սիրունութինդ էլաւ արբաբ.
Մազիր ունիս՝ սիմ ու շարբաբ.
Քի սազ գու քայ զուշլու զարբաբ.—
Ղուշլու զարբաբ,
Զ'կայ քիզի նման, չ'կայ քիզի նման.
Քիզ նման, քիզ նման.
Դուն իս աննման.

Էրէսըդ է շամն ու զամար.
Զանըս գուս գու քայ քիզ ամար.
Մէջկիդ ունիս օսկէ քամար.—
Օսկէ քամար.
Զ'կայ քիզի նման, չ'կայ քիզի նման.
Քիզ նման, քիզ նման.—
Դուն իս աննման.

Հաքիդ զարըն՝ ալ իս արի.
Բլբուլի հիդ լալ իս արի.

Բարկ էրէսիդ խալ իս արի՝—
Խալ իս արի.
Զ՚կայ քիզի նման՝ չ՚կայ քիզի նման.
Քիզ նման՝ քիզ նման.—
Դուն իս աննման։

Դարդըս ասիմ՝ կու լան սարիր.
Էս ի՞նչ բան էր՝ վուր դուն արիր.—
Սայեաթ-Նովուն՝ ջունուն արիր՝—
Ջունուն արիր.
Զ՚կայ քիզի նման՝ չ՚կայ քիզի նման.—
Քիզ նման՝ քիզ նման.
Դուն իս աննման։

Եշխէմէն էնպէս վառվիլ իմ՝ վունց Մէջլում
եար իմ ասում։
Գոզալի տիսուն կարոտ իմ՝ հիդ քաշվի սար
իմ ասում։

Ղուրբան իմ ծուղիդ նրռանըն՝
Հոքիս տամ շիմշատ կրռանըն՝
Թաք պառկիմ եարի գըրանըն՝—
Գըլխոքըս քար իմ ասում։

Հաքիլ իս ատլաս խասէմէն՝
Խըմէցու ձէռիդ թասէմէն՝

Համաշա էշխիդ բասէմէն
Էրվում իմ՝ ճար իմ ասում։

Բաղ կու սիրիմ՝ ես բաղման չ'իմ՝
Բաղի տիրուչրն ճանանչիմ։
Բլբուլ իմ՝ սիրով վարթ կանչիմ՝—
Հիդ քաշվի՛՝ խա՛ր իմ ասում։

Մէջլիսնէրու խաղրն դուն իս՝
Վանքէրումրն տաղրն դուն իս՝
Սայեաթ-Նովու բաղրն դուն իս՝—
Կարօտ իմ՝ բառ իմ ասում։

Բէդասլին վուր խօսէցնիս. չալ անիլրն ինչի՞ն է շահ։
Ռանգը վուր սէվադէն նընգնի. ալ անիլրն ինչի՞ն է շահ։
Մարթ վուր՝ քու խօսկով մէռանի՝ գալ անիլրն ինչի՞ն է շահ։
Պատանքրն մէ ռանգն է հէրիք. չալ անիլրն ինչի՞ն է շահ։

Մարթ պիտի թանգ հախ տայ՝ առնէ խօսկիրրն փիր ուստադէմէն.
Ռանգրն ռանգէրուն ծածկում է՝ հուշրէքրն լիքն է սադէմէն.

Թէգուզ զար զարբաբ հաքցընիս՝ վուր չըլի սաբլ-
ջադէվէն.
Սիվ Արաբի ճակտի վըրայ խալ անիլըն ինչի՞ն է
շահ։

Լավ մարթն էն է՝ սիրօվ անէ բարի հրիշտակ-
նէրու կամքըն.
Իմաստուններիրըն չը տէսան էս աշխարիս հուտն
ու համքըն.
Զուրս գըլխանի ռաշի վըրէն աջալըն դըրիլ է
թամքըն.
Աշխարըս միզ մընալու չ՝է, մալ անիլըն ինչի՞ն է
շահ։

Մէր ու մանուկ բաժանվէցան՝ մանուկն էնգուր
ունի լալու.
Սատանէն մէ դամբ է տըրի Ադամի զաթըն
վուրալու.
Շատըն սատանէն է տանում՝ վիրչըն մընում է
վայ տալու.—
Վուր չ՝է Ուռնիէլի նման՝ կալ անիլըն ինչի՞ն է
շահ։

Շուռ էրիտ չարիս ու փսլագըն՝ գօվլաթըն միզ-
նից խըռօվ ա.
Ում հաքին հին շալ ին ին տէսնում՝ է՝լ չ՝ին
ասում՝ թէ էս ծ՞վ ա.

Եարօվտի մէկ մըհլամ չ՚ունիս, էնդուր կու լաս
Սայեաթ-Նօվա.—
Զարէքըն դիղըդ չ՚ին գիդի՝ փալ անիլըն ինչի՞ն
է. շահ։

Ամունց օր վուր ղարիբ բուլբուլըն մէ տարօվ
բաղին կարօտ է՝
Էնէնց կու լայ քու սիրօղըն՝ ձէռիդ արաղին
կարօտ է.
Դուն ուրիշի հիդ մի՚ խօսի՝ քու ճուրտն աղին
կարօտ է.
Հասիլ է ծուցիդ շամամըն՚ օսկէ թաբաղին կարօտ է։

Մէ զադ չը կայ՚ գումանն ածիմ՚՝ ասիմ՚՝ էն նը-
մանն է գունքըդ.
Անղալամ անզարնիշ քաշած օսկու պէս է փայ-
լում ունքըդ.
Բօյէմէդ չուրս մատըն ավէլի լըցվիլ է դօշդ
ու թիկունքըդ.
Զարօվ աբրէշումօվ հուսած մազիրըդ՚ շաղին
կարօտ է։

Դուն խօ՚մ էն գըլխէն գօվաճ իս՝ ես քիզ նուր-
մէկ գօվիմ արի՚.
Ծուցըդ վարաղնաճ հուջրա է՝ հուտ ունէ մուշկ
ու անբարի.

Երիք հարուր ու վաթսուն ու՝ վից ամէն անդամդ դարարի.
Կուռբդ շիմշատ մատնիրբդ մում՝ բրբոլէ ճաղին կարօտ է։

Ես էլ ուրիշ եար չ'իմ սիրի՝ աշխարումբս դուն իս իմին.
Թէ մէ շափաթ քիզ չ'իմ տէսնի՝ կու կլտրիմ բամանչի սիմին.
Թէգուզ թաքավուրբն կանչէ՝ թէգուզ Լօղիման հէքիմին՝
Վո՞ւր մէ դարդս կու հասկանայ նա՝ դուգունբս դաղին կարօտ է.

Գիշիր ցէրէկ մանի իմ գալի էշխէդ եանա եանա՝ գօզալ.
Անգաճ արա՝ մատաղ իմ քիզ՝ մէ քիչ կամաց գընա՝ գօզալ.
Աշխարբս ո՞ւմն է մընացի՝ վուր ինձ ու քիզ մընայ՝ գօզալ.
Մանգամ մէռաւ Սայեաթ-Նովէն՝ անգաճբդ խաղին կարօտ է։



Ա՞էջլումի պէս կօրաւ եարբս՝
Լէյ-լի ջան՝ մանի իմ գալի էանա էանա.
Էրվէցաւ խունի ջիգարբս՝
Արնի պէս աչկս է լալի էանա էանա՝ էանա էանա։

Բլբուլի նման լացիլ իմ,
Աչկիրըս արնօվ թացիլ իմ,
Էշխէմէդ հիվանդացիլ իմ,
Պառկած իմ դրժար հալի էոնա էոնա, էոնա էոնա։

Էշխէմէդ դարիլ իմ Եզիդ,
Հալվէցայ, մաշվէցայ քիզիդ.
Ռահմ արա՛, մէ խօսի՛ միզիդ՝
Բէմուրվաթ, ձէն իմ տալի էոնա էոնա, էոնա էոնա։

Էրվում իմ, կանչում իմ՝ ամնան.
Ծուցրդ բաց, ունքիրրդ քամնան.
Աշխարիս մէջրն քիզ նման
Չիմ տէսած, մանի իմ գալի էոնա էոնա, էոնա էոնա։

Մանուշակ բաց արած հօվին,
Կարմիր վարթ, ծաղիկ հուտօվին,
Շատ մի՛ լացցնի Սայեաթ-Նօվին՝
Աչկիլուս, կըսկրծալի՝ էոնա էոնա, էոնա էոնա։

Զուանց քիզ ի՞նչ կօնիմ սոյրաթն ու սազրն,
Զէռնէմէս վէր կօծիմ չանգիրրն մէմէկ.
Զունքի ուշկ ու միտկրս իրար շաղէցիր,
Փահմէս կու հիռացնիմ հանգիրրն մէմէկ։

Մէ դուգունըն էրկու դաղին ի՞նչ անէ,
Մէ նօքարըն էրկու աղին ի՞նչ անէ,
Մէ բաղմանչին էրկու բաղին ի՞նչ անէ,
Փէյվանդ գ՚ուզէ թազա տընգիրըն մէմէկ։

Ղուրթ ին ասի փիր ուստաքար դաղիրըն.
«Բաղ շինէցի, վարթն քաղէցին վաղիրըն.»
Ջափէն ես քաշէցի, սափէն եաղիրըն.
Բաղիփէն էկաւ միզ էս բանգիրըն մէմէկ։

Առանց քիզ ի՞նչ կօնիմ աշխարիս մալըն.
Ջ՚իմանայ թալգըն, չ՚իմանայ գալըն,
Կու հաքնիմ մազէղէն, կու հաքնիմ շալըն,
Կ՚էրթամ ու ման գու քամ վանքիրըն մէմէկ։

Բըլքամ մէ մարթ ռաստ գայ՝ վուր ինձ խըրատէ.
Գօզալ, քու էշխէմէն սիրտըս ազատէ.
Կանց եօթըն խմաստնասիրացըն շատ է՝
Է՚ս քու, Սայեաթ-Նովա, բանքիրըն մէմէկ։

ԱՑՍ ՏԵՂԻ ԴԺՈՒԱՐ ՀԱՄԿԱՆԱԼԻ ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ.

Ագաբ	համբաստութիւն։
Այիվան	հովանոց։
Անգար	բուրկէն. ամպար։
Անգալ	արգելք. տարաժամ եկած մարդ։
Անզարնիշ	անոսկէնիշ։
Ալնոր	տրդեճք։
Ալալ	օրհաս։
Ար	ամոթ։
Արա տալ	արան. հրամայեան որ կտրեն։
Արբաք	մեծ. եւս զրկիչ։
Արբաք ըլիլ	զրկած լինիլ։
Արլջաղա	քաջաառնմիկ։
Բաբ	համեմատ. հաւասար։
Բաս	վէճ. գործիք վիճոյ։
Բաշ	գլուխ։
Բէմուլվաթ	անողորմ։
Բուքա	սիրահար։
Գրգի բրգի	անչափ. անհամար։
Դուլդուլ	խաս ալ. զուտ կարմիր. Դիրանագոյն։
Դուման	կարծիք։
Դունք	գոյնք։
Թզալ	սիրուն։
Խադա	վարպետ։
Դաղ	խարան։
Դամ	հրճուանք. քէֆ։
Դամաղ	քիմք. կամք. քէֆ։ Մէ դամաղի—միակերար։
Դաստամաղ	հերք. գէրք։
Դավ տալ	դատախնդիր լինիլ։
Դիդար	սիրական. գեղեցկութիւն. երես։
Դիվանա	խելագար։
Դուգուն	արհեստական բացարան վէրք։
Հաշվիլ	համեմատիլ. հաւասարիլ։
Հարօվան	եարատ. խոցաւոր. վիրաւոր։
Էզիդ	չար հոգիներին հաւատացող Քուրդստանի ժողովուրդ։
Զախ անիլ	նեղիլ։
Զալում	անիրաւ։
Զարա	ծաղիկ։

Զարնիշ, զարնշան	ռակէնիշ։
Զօղ	խրախճանք։
Էշխ	սիրտհարութիւն, աշխոյժ։
Թաղն	կանթ կամ կոթ շամանի, ձմերուկի եւայլն.
Թարիւի	պատմութիւն։
Թիղ	տեպ, նեռի ծայրի տուր երկաթը։
Թիրմանշալ	Քեռաշմիր երկրի ազնիւ շալ։
Թուքի զուշ	թուքակ։
Իլթիմազ	ազատանք։
Իղրար	խոստումն, խօսք տալը։
Ինթիպար	կարօտանք։
Լամզ	անպշ, լաւ արտաբերութենով խօսակցութիւն։
Լէյլի	Մէջնունի սիրելին։
Լօղման	Ընդկաց հուչակաւոր բժիշկ։
Խամ	անթափ կտաւ։
Խար	փուշ վարդենոյ։
Խարա	կերպաս։
Խիալ	վատ միտք, կարծիք։
Խունի ջիգար	թուք։
Կուդի	պոչ, ագի։
Համան	համոյն, միշտ։
Հայա	ամօթ։
Հուջրա	փոքր առանձնատեղեակ, արկղիկ։
Հուտօվին	հատուէտ։
Հուքմի հէքիմ	հրամայող տէր։
Ղադա	ցաւ։
Ղաղաբ	պատիժ։
Ղալա	ամրոց, բերդ, քաղաք։
Ղալամթրաշ	գմելին, գրիչ կտրելու դանակ։
Ղամար	լուսին։
Ղանդու շաքար	ազնիւ շաքար Ղանդահարու։
Ղատա	ջոնք, աշխատանք։
Ղարիբ	աշուղ Կարիբ, պանդուխտ։
Ղարարի	յարմարեալ։
Ղիմէթ	գին։
Ղուլ	սարուկ։
Ղուշլու զարբաթ	Քեռաշանի թուչունների նկարներ ունեցող թել կերպաս։
Ղումաշ	կերպաս։
Ղօբա	ցանկ։
Մաթ	սպուշ։
Մալ	ինչք։
Մալ անիլ	դանձ կուտել։
Մանդիլ	վերարկու, քղամիդ։
Մարմաշ	Մօտուլ քաղաքից եկած բարակ չիթիլայ, լայար։
Մարջան	բուստ։

Մէջլում	Մէջնուն՝ Լէյլիի սիրահարը։
Մէրիլ, մէրած	մանուցանել, թանձրացուցանել։
Մինա	կիտուած, արծնապակի։
Միրա	սիրելութիւն, երկին։
Մհլամ	ապերդանի։
Մուրվաթ	գութ։
Նաբաթ	սառը շաքար։
Նազ ու զամզ	պչրելով հայել։
Նազանի, Նազլու	Նազելի։
Նազաշ, Նախշ	Նկար։
Նաբազ	ցած, վատթար, ժլատ։
Նուղլ	շաքարով պատած նուշ։
Շադա	շար։
Շահիբ	մեծ, բարձրագահ։
Շահանամ	աշուղ Կարիբի սիրած աղջիկը։
Շամս	արեգակ։
Շար	արդարութիւն։
Շարբաթ	Շիրվանու նուրբ մանած մետաքս։
Շիմշատ	տոսուխ։
Շիրին	Փերհադի կամ Փահրադի սիրականը։
Շիրմայի	փղոսկր։
Ուռնիէլ	Ուռնա յերուսացի։
Զալ	դոյնդդոյն, երկգոյն։
Զանգ	բամբիւն։
Զարիս ու փալաթ	ընթացք, շրջանակաւոր շարժումն։
Զարա	վիրաբոյժ, սնխէի։
Զուհար	գոյացութիւն, աչքի ջուր, աչքի լոյս։
Զուհարդար	պաղպաջաւոր, փայլեցնող։
Զունուն	խեղճադար։
Թաշ	Թիւոտէսի հոչակաւոր ձին, թեւաւոր ձի։
Թահմ	ողորմութիւն։
Սաբր	համբերութիւն։
Սադաղ	կապարճք։
Սալաս, սալբի	նոճի։
Սայեաթ	որսորդ։
Սաջար	ծառ, թուփ։
Սափա	խրախճանք։
Սէվադա	սեւութիւն։
Սիմ	պոռոմատիկ կամ պնդնձէ թել նուագարանի։
Սիրայ	հիւսուած, շղթայակապ։
Սնբուլ	հասկ։
Սուչ	աղաչանք։
Սուսան	շուշան։
Սուսանբար	զամբախ։
Սուրմա անիլ	ծարրել։
Սոյբաթ	սիրելութիւն առնելն։

Վէքիլ	փոխանորդ.
Բաղդամ	աղքայի հրամանագիր.
Բաղիվ	արդեւլիչ սիրահարների մէջ.
Բանգ	գոյն, եւս խարդախութիւն.
Բուփա	դարբէկ, թարէք.
Բուքար	ոստայնի նուրբ գործած ծայրը.
Բօստոմի Չալ	Չալի որդի Բիւստէմը, որոյ քաջութիւնները գովաբանում է Ֆիրդաւսին իւր Շահնամէյում.
Փալ	բարի աստղ, հմայք.
Փահմ	ուշ.
Փահրադի	Շիրինի սիրահարը, որ Շիրինի սիրով վառուած՝ քլունգով կտրեց ու ծակեց ապառն, իւր սիլականի երեսը տեսնելու համար.
Փար	վահան.
Փարա	լոյս, ճառագայթ.
Փարա փարա	մաս մաս.
Փարդ	հատ, յարմար պատասխան.
Փէյվանդ	պատուաստ.
Փիալա	լիքն գինու բաժակ.
Փիր	ծեր, գլխաւոր.
Քաբաբ	խորով.
Քալաղ	քաղաք.
Քամանդ	աղեղն.
Քար	քարայր.